

Այսպես կը խոսեր Սմբատ եւ կը հառաչէր, երբ յանկարծ խառնաձայն աղաղակ մը լսուեցաւ. ցատկեց դէպի պատուհանը, տեսաւ քազմաթիւ խումբ մը արաբ զօրականաց, որ մարդ մը վերամբարձ կը տանէին, մարդ մը գլխաբաց՝ զինաթափ, եւ հարիւր ձեռք այդ մարդը կը քաշկռտէին ու հազար ուրախութեան ձայն երկինք կը բարձրանային. իսկ մարդը արհւնջուայ էր բոլորովին, եւ մօտ եղողները կրնային տեսնել, որ անխռով, աներկիւղ եւ արհամարհոտ աչքեր կը պտըտցնէր ամբոխին վրայ. այդ մարդը Յովնանն էր:

Նոյն միջոցին կը հասներ Բուղայի թիկնապահաց խումբ մը, կը ցրուէր այդ զօրականաց խառնաղանճը, եւ կալանաւորը յափշտակելով կատաղեաց ձեռքէն կ'առնէր կը տանէր դէպ ոստիկանին պալատը:

Իսկ Սմբատ ետ քաշուեցաւ, եւ ձեռքը յուսահատութեամբ ճակտին զարնելով կ'ըսէր. «Ափսո՛ս այդ քաջ մարդուն. եւ երբ կը մտածեմ թէ սորա կորստեան պատճառ ես ինքս եմ, եւ ես լոկ անունով Հայոց Սպարապետ՝ չեմ կրնար բան մ'ընել իրեն ազատութեան համար, յիրաւի կը գտնեմ, որ այդ մարդը ինձմէ երջանիկ է»: